

ԶՕՐ. Գ. ՂՈՐՂԱՆԵԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### I

#### ԲՐԵՍՏ - ԼԻՏՈՎՍԿԻՑ ՄԻՆՉԵՒ ՍԵԻՐ

Հոկտեմբերեան յեղաշրջման հետեւանքով նախկին ռուսական կայսրութեան հողերի վրա կազմւեցին մի շարք նոր պետութիւններ, որոնց թւում եւ Անդրկովկասեան Հանրապետութիւնը:

Սակայն, մի կողմից անյաջող պատերազմը թիւրքիայի հետ, որ Անդրկովկասը ստիպւած եղաւ վարել Բրեստ-Լիտովսկի դաշնագրից յետոյ, միւս կողմից Անդրկովկասեան ժողովրդների շահերի ու ճշդ-տունների ներհակութիւնը, վերջապէս, թիւրքիայի ճնշումները պատճառ դարձան, որ Անդրկովկասեան Հանրապետութիւնը, հազիւ երկու ամսւայ կեանքից յետոյ, քայքայի: 1918 թ. մայիս 26-ին անկախութիւն յայտարարեց Վրաստանը, իսկ 28-ին՝ Ազրբէջանն ու Հայաստանը:

1918 թ. նոյեմբ. 11-ի ընդհանուր զինադադարից յետոյ, Փարիզում գումարւած Հաշտութեան Վեհաժողովը պէտք է լուծէր պատերազմի հետ կապւած բոլոր հարցերը: Բնական է, որ ազգային ինքնուրոյն կեանքի կոչւած Հայաստանի Հանրապետութիւնն էլ ձգտէր Վեհաժողովից ստանալ իր զոյութեան իրաւական ճանաչումը: Հաշտութեան Վեհաժողովը Հայաստանին պէտք է կցէր եւ Օսմանեան կայսրութեան հայկական հողերը, քանի որ Դաշնակից պետութեանց պատերազմական նպատակներից մէկն էլ քրիստոնեայ ժողովուրդների ազատագրութիւնն էր թիւրքական տիրապետութիւնից:

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՎԵ ՀԱԺՈՂՈՎԸ. — Այդ նպատակով ահա Հայաստանի Հանրապետութիւնը Եւրոպա ուղարկեց մի պատւիրակութիւն Ա. Ահարոնեանի նախագահութեամբ: Պատւիրակութիւնը Փարիզ հասաւ 1919 թ. փետր. 4-ին եւ անմիջապէս սերտ դորձակցութեան մէջ մտաւ Ազգային Պատւիրակութեան հետ: Այս վերջինս, Պօղոս Նուպար փաշայի նախագահութեամբ, դեռ 1918 թ. նոյեմբ. 30-ին

Դաշնակիցներին հաղորդել էր Միացեալ Հայաստանի անկախ պետութեան ստեղծման մասին :

Նախնական լուրջ աշխատանքից յետոյ, Պատուիրակութիւնները եկան կատարեալ համաձայնութեան եւ 1919 Վիտոր . 2-ին Հաշտութեան Վեհաժողովին ներկայացրին հայկական բաղձանքները արտայայտող ընդարձակ մի յուշագիր՝ «Հայկական Հարցը Հաշտութեան Վեհաժողովի առջեւ» : Յուշագիրը Վեհաժողովից պահանջում էր՝ ճանաչել Հայաստանի անկախ պետութիւնը՝ բաղկացած հօթը վիլայէթներից, Կիլիկիայից եւ Կովկասեան Հայկական Հանրապետութիւնից :

Եօթը վիլայէթներից պէտք է դուրս ձգէին Տիգրիսից հարաւ եւ Օրդու-Սըվազ գծից դէպի արեւմուտք գտնուող հողամասերը : Գայով Կիլիկիային՝ Հայաստանի սահմանների մէջ պէտք է մտնէին Մարաշի, Կողանի, Ջէրէկ Բէրէքէթի եւ Ադանայի սանջակներն ու Ալեքսանդրէթ նաւահանգիստը : Իսկ Կովկասեան Հայկական Հանրապետութիւնն իր մէջ ընդգրկելու էր նախկին Երեւանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարաւային մասը, Գանձակի նահանգի հարաւարեւմտեան մասը եւ Կարսի նահանգը առանց Արղահանից դէպի հիւսիս ընկած մասերի :

Յուշագիրը ցոյց էր տալիս, որ այս ձեւով կազմած Հայկական պետութիւնը պէտք է դրել Դաշնակից պետութիւնների եւ Հիւս . Ա . մերիկայի Միացեալ Նահանգների հաւաքական հովանաւորութեան եւ կամ Ազգ . Դաշնակցութեան պահպանութեան ներքոյ : Միաժամանակ խնդրում էր Հայաստանն էլ ընդունել Ազգ . Դաշնակցութեան կազմի մէջ : Հաշտութեան Վեհաժողովը պէտք է հոգատարութեան գործը յանձնէր պետութիւններից մէկին, որը, փոխանցման շրջանում, 20 տարուց ոչ աւելի, աջակցութիւն պիտի ցոյց տար Հայաստանին : Հոգատար պետութեան ընտրութեան ժամանակ պէտք է լուէր եւ Փարիզում հաւաքած հայկական համագումարի կամքը :

Թւելով այս գլխաւոր պահանջները ի մասին Հայաստանի միջազգային դրութեան եւ սահմանների՝ յուշագիրը դնում էր եւ հատուցումների պահանջը Թիւրքիայից՝ կատարւած տեղահանութիւնների, կոտորածների, բռնադրաւումների եւ հայ ազգի կրած ամէն տեսակ վրկանքների համար : Հատուցումների խնդիրը պէտք է որոշէր Հաշտութեան Վեհաժողովում, եւ Հայաստանը պէտք է ստանձնէր Օսմանեան պարտքի մի մասի վճարումը :

Հայկական ազգային եւ մասնաւոր լքեալ գոյքերը Թիւրքիայում

պէտք է յանձնէին Պոլսի հայոց հոգեւոր իշխանութիւններին եւ դորձադրէին հանրային կարիքների վրա :

Հոգատարութիւնը ստացած պետութիւնը պարտաւորուած էր՝ հարկադրել հայկական հոգամասերը դրաւոյ թիւրքական, թաթարական եւ այլ իշխանութիւններին մաքրել այլ հոգերը, ընդհանուր վնասախուժեան ենթարկել բնակիչներին, արտաքսել ու պատժել բոլոր նրանց, ովքեր մասնակցել էին ջարդերին, բռնութիւններին ու թալաններին, այլեւ հեռացնել բոլոր հանրային անդորրութիւնը խանդարող տարրերը, Արդուլ-Համիդի եւ իթթիհատականների իշխանութեան օրով Հայաստանում բնակեցւած մուհաջիրներին, եւ, վերջապէս, թէ Հայաստանի ներսը եւ թէ դուրսը միջոցներ ձեռք առնել հայկական կրօնին վերադարձնելու համար բռնի խլամապեւած կանանց, աղջիկներին ու երեխաներին եւ հարէմներից ազատել հայ կանանց :

Այս բոլորից դատ, թիւրքիան պէտք է հայերին վճարէ պատերազմի ժամանակ բռնութեամբ դրաււած դոյքերի, ինչպէս եւ թիւրքական հոգերի վրա մնացած հայկական ստացւածքների փոխարժէքը, այլեւ վերադարձնէր հայերից յախշտակւած եկեղեցիները, դպրոցները, վանքերը՝ իրենց բոլոր հիմնարկութիւններով ու հողերով :

Հայկական ծագում ունեցող եւ ուրիշ երկիր ապրող բոլոր հայերը, անկախ նրանից թէ այլ երկրների հպատակութիւնն ընդունել են թէ ոչ, իրաւունք պէտք է ունենային հինգ տարւայ ընթացքում ընդունել Հայաստանի հպատակութիւնը :

Հոգատարութիւն խնդրելով՝ պատուիրակութիւնները ղլխաւորապէս աչքի առաջ ունէին այն նկատումը, որ առանց արտաքին ուժի աջակցութեան անհնար կը լինի թիւրքահայաստանում լուծել պատերազմից բխող եւ յուշագրում մանրամասնօրէն յիշւած բոլոր խնդիրները :

Միւս կողմից, Հաշտութեան Վեհաժողովն էլ դեռ 1919 թ. յունիս. 30-ին, ուրեմն, մինչեւ հայկական յուշագրի ստացումը, որոշել էր ազատել Հայաստանը եւ հոգատար նշանակել Ազգերի Դաշնակցութեան Ուխտի 22-րդ կէտի համաձայն :

Ուխտի 22-րդ կէտը, որ վերաբերւում է միջազգային հոգատարութիւնների (մանկատ) հարցին, ասում էր, թէ բարեկեցութիւնն ու դարգացումը այն ժողովուրդների, որոնք բնակուած են պատերազմը վերջանալուց յետոյ մինչեւ պատերազմ տիրող պետութեանց գերիշխանութիւնից դուրս եկած հոգերի վրա, եւ որոնք վեւ

ընդունակ չեն իրենց կառավարելու, կազմում է քաղաքակրթութեան սրբազան պարտականութիւնը: Եւ այս դէպքում, հոգատարութիւնը նման ժողովրդի վրա յանուն Ազգերի Դաշնակցութեան պէտք է յանձնւի բարձր մշակոյթի տէր մի ազգի:

Ուխտը առանձնապէս ընդգծում է, որ նման դրութեան մէջ են գտնուում այն համայնքները, որոնք մտնում են Օսմանեան կայսրութեան կազմի մէջ եւ արդէն հասել են այնպիսի զարգացման, որ կարող են ճանաչել անկախ, պայմանով միայն, որ հոգատարութիւնն ստանձնած պետութիւնները վարեն նրանց վարչութիւնը, մինչեւ որ ճանաչելի նրանց իրենց կառավարելու կարողութիւնը:

Համայնքի կարծիքը պէտք է ի նկատի առնէր հոգատար պետութեան ընտրութեան ժամանակ:

Թիւրքահայաստանի ազատութիւնը եւ հոգատարութեան հարցը սկզբունքով որոշելուց յետոյ, Հաշտութեան Վեհաժողովը պէտք է դործնական վճիռ արձակէր ընտրութեանը մասին այն պետութեան, որ կը համապատասխանէր պահանջած պայմաններին եւ կը կամենար ստանձնել այդ հոգատարութիւնը: 1919 թ. մարտ 20-ին Չորսերի Սորհուրդը, նախագահ Վիլսոնի նախաձեռնութեամբ, որոշեց Մերձաւոր Արեւելք ուղարկել Միացեալ Նահանգների, Ֆրանսայի, Անգլիայի եւ Իտալիայի պատերազմութիւններից բաղկացած միջազգային մի յանձնախումբ՝ հաւաքելու համար տեղեկութիւններ Օսմանեան կայսրութիւնից անջատելիք հողամասի վրա ապրող ազգաբնակչութեան կարիքների մասին:

**ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԻՐԱԿՆԵՐԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ.**— Այդ յանձնախումբը փաստօրէն երբեք էլ չհաւաքեց: Միայն ամերիկեան պատերազմներ Քինգը (King) եւ Քրէյնը (Crane) հարցաքննութիւն կատարեցին 1919 թ. յունիս 10-ից մինչեւ յուլիս 21: Նրանք եկան այն եզրակացութեան, որ նախկին Օսմանեան կայսրութիւնից պէտք է կազմել երեք նոր քաղաքական միաւոր՝ Հայաստան, միջազգային պետութիւն Պոլսում եւ Թիւրքիա: Այդ երկրներից իւրաքանչիւրի հոգատարութիւնը պէտք է յանձնւի որեւէ պետութեան: Թէ այս մասնաւոր հոգատարութիւնները եւ թէ ընդհանուր հոգատարութիւնը բոլոր երեքի վրա պէտք է յանձնւի մէկ պետութեան: Առանձնապէս դժւար է Հայաստանի հոգատարութեան իրականացումը: Պէտք է մի նոր պետութիւն կազմել շրջապատի ընդհանուր թրշնամական վերաբերումի մէջ: Ուստի անհրաժեշտ է, որ Հայաստանի հոգատարութիւնը ստանձնած պետութեան ճիգերը չչէզոքացւին ուրիշ պետութիւնների դործերով Փոքր Ասիայում: Եւրոպական զա-

նազան պետութիւնների նպատակներն ու ձգտումները Փոքր Ասիայում այնքան ներհակ են, որ բոլորովին անխոհեմութիւն կը լինի հողատարութեանց յանձնումը տարրեր իդէալներ եւ կառավարութեան տարրեր եղանակներ ունեցող պետութիւններին: Եթէ այս պայմաններում Թիւրքիան (Հայաստանը չհաշւած) բաժանի ազդեցութեան դօտիների, Հայաստանի հողատարութիւնը կը հանդիպի անյաղթահարելի արգելքների:

Հիմնաւորելով նախկին Օսմանեան կայսրութեան տեղը ստեղծուած պետութիւնների մասնաւոր եւ ընդհանուր հողատարութիւնը մէկ պետութեան յանձնելու միտքը՝ քննիչ պատգամաւորները եկան այն եզրակացութեան, որ այդ հողատարութիւնը պէտք է ստանձնէ Ամերիկան, որը բոլոր պետութիւններից ամենէն յարմարն է ստանալու համար Պոլսի հողատարութիւնը, որովհետեւ հողային եւ ռազմագիտական շահեր չունի այնտեղ եւ ջերմ համակրանքով է վերաբերում նման պետութեան նպատակներին:

Պատգամաւորների կարծիքով Փոքր Ասիայի ժողովուրդների բաղձանքն է, որ Միացեալ Նահանգներն առենն հողատարութիւնը: Այդ ժողովուրդները խորունկ համակրանքով են վերաբերում Ամերիկային եւ համոզւած են, որ ամերիկացիք, հողատարութեան շրջանը լրացնելուց յետոյ, կը հեռանան երկրից:

Հողատարութիւն ընդունելու ի նպաստ առաջ էին բերում հետեւեալ հիմքերը: Ամերիկայի Միացեալ Նահանգները անխախտ հաւատքով են նայում Ազգերի Դաշնակցութեան բարձր վերին: Որպէսզի Ազգ. Դաշնակցութիւնը կարողանայ հասնել առաջադրւած մի շարք հարցերի լուծման, անհրաժեշտ է, որ նրա մէջ մտնող բոլոր պետութիւնները ստանձնեն պատասխանատուութիւն:

Հողատարութեան հակառակ խօսում է նախ նիւթական խոշոր ծախսերի անհրաժեշտութիւնը, երկրորդ՝ մեղադրանքը աշխարհակալական դիտաւորութիւնների մէջ:

Հողատարութիւնը ընդունելու պարագային Միացեալ Նահանգները նախօրօք պէտք է համոզւին, ա. որ այդ հողատարութիւնը ցանկալի է Թիւրքերին եւ որ նրանք ոչ միայն պատրաստ են Հայկական պետութեան կազմութեան համար հող տրամադրել, այլեւ խրախուսել Հայերի վերադարձը այնտեղ. բ. որ Ռուսաստանը հրաժարւի իր բոլոր յաւակնութիւններից Կովկասեան Հայաստանի նրկատմամբ, եւ գ. որ Դաշնակիցները հրաժարւին ազդեցութեան շրջաններից:

Այս քննական հետադոտութիւնից քիչ առաջ էր, 1919 թ. մայիս

28-ին, որ Երեւանի կառավարութիւնը յայտարարեց Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

ԶՕՐ. ՀԱՐՔՈՐԳԻ ԱՌԱՅԵԼՈՒԹԻՒՆԸ. — Իբրեւ լրացում Քինգի եւ Քրէյնի կատարած քննութեան, նախագահ Վիլսընը Հայաստան ուղարկեց մի նոր առաքելութիւն զօրավար Ջէյմս Հարրորդի ղեկավարութեան տակ: Զօր. Հարրորդի եղբակացութիւններն ու միաբերուն էլ զուգադիպեցին Քինգի ու Քրէյնի եղբակացութիւններին: Հարրորդը կարծում էր, որ ընդհանուր հոգատարութիւնն իր մէջ պէտք է առնէ եւ Անդրկովկասը եւ որ անկախ Հայաստանի ստեղծման համար անհրաժեշտ է զինուորական մեծ ուժեր մտցնել Հայաստան: Զօր. Հարրորդը գտնում էր, որ Հայաստանի հոգատարութեան ստանձնումը Ամերիկայի կողմից անհրաժեշտ է՝ վերջ տալու համար քրիստոնեաների նկատմամբ գործւող զազանութիւններին: Բացի այդ, Միացեալ Նահանգները, իբրեւ Ազգերի Գաշնակցութեան հիմնադրութեան նախաձեռնող, չպէտք է խուսափեն իրենց վրա դրւող պատասխանատուութիւնից: Միեւնոյն ժամանակ նա ցոյց էր տալիս, որ հոգատարութեան ստանձնումը կարող է պատճառ դառնալ, որ Միացեալ Նահանգները մխրճւին եւրոպական քաղաքականութեան մէջ եւ հարկադրւին ուժեղացնել Միացեալ Նահանգների բանակն ու նաւատորմիդը, որպէսզի կարողանան ապահովել անարգել հազարդակցութիւնը Պոլսի հետ:

Հոգատարութեան ստանձնումը զօր. Հարրորդը պայմանաւորում էր հետեւեալ պահանջներով. բացարձակ հակակշիռ Միացեալ Նահանգների կողմից Թիւրքիայի արտաքին յարաբերութիւնների վրա. բացառիկ առանձնաշնորհումներ պարունակող մենաշնորհների վերաքննութիւն. ջնջել դեռ չչահագործւող մենաշնորհները. ջնջել որոշ նպատակների յատկացւող հասոյթներ նշանակելու դրութիւնը. ջնջել կիրառւող հակակշիռը Թիւրքիայի կլեմուտքի վրա:

Միեւնոյն ժամանակ, Գերագոյն Խորհրդում (Conseil Suprême) քննում էր Հայաստանի հոգատարութիւնը այս կամ այն պետութեան յանձնելու խնդիրը, բայց, դժւարութիւնները աչքի առաջ ունենալով, ոչ մի պետութիւն չկամեցաւ պատասխանատուութիւն ըստանձնել եւ բոլոր յոյսերը մնացին միայն Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգների վրա:

Իրենց հերթին Հայաստանի Հանրապետութեան եւ Ազգային պատուիրակութիւններն էլ նոյն խնդրի առթիւ պաշտօնական բանակցութիւններ էին վարում պետութիւնների ներկայացուցիչների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՍՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ. — Մինչ այս, մինչ

այն, 1920 թ. վերջերը Գերագոյն Սորհուրդը եւ Գաշնակից մեծ պետութիւնները ճանաչեցին Հայաստանի կառավարութիւնը իրրեւ իրական - *de facto* - կառավարութիւն:

1920 թ. յունւար 27-ին, Հաշտութեան Վեհաժողովի քարտուղարութիւնը հաղորդեց Հայաստանի Հանրապետութեան պատւիրակութեան նախագահին, թէ 1920 թ. յունւար 19-ի նիստում Գերագոյն Սորհուրդը հանել է հետեւեալ երկու որոշումը:

1) «Որ Հայկական պետութեան կառավարութիւնը ճանաչած է իրրեւ *de fait* (իրական) կառավարութիւն:

2) «Որ այս ճանաչումը չի նախորդում այդ պետութեան ապագայ սահմանների հարցը»:

Վեհաժողովի քարտուղարութիւնն աւելցնում էր նաեւ, թէ Միացեալ Նահանգների զեսպանը յունւար 26-ին հաղորդել է, «որ ամերիկեան կառավարութիւնը միանում է այդ որոշման»:

1920 յունւար 28-ին Վեհաժողովի քարտուղարութիւնը տեղեկացրեց Հ. Հ. Պատւիրակութեան, որ Գերագոյն Սորհրդի որոշման նման որոշում հանել են եւ Ֆրանսայի, Մեծն Բրիտանիայի ու Իտալիայի կառավարութեանց պետերը:

Վեհաժողովի քարտուղարութեան այս հաղորդադրութեան 1920 մարտ 7-ին յաջորդեց մի նոր հաղորդադրութիւն Ճապոնական դեսպանի յայտարարութեան մասին, թէ՛ «Ճապոնական կառավարութիւնը միանում է այն որոշման, որով Մեծն Բրիտանիայի, Ֆրանսայի եւ Իտալիայի կառավարութիւնները ճանաչել են Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը իրրեւ *de fait* կառավարութիւն»:

ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԸ. — Այս *de fait* ճանաչման յաջորդեցին մի շարք խորհրդակցութիւններ մշակելու համար Թիւրքիային ներկայացնելիք հաշտութեան պայմանները: Հայկական երկու պատւիրակութիւններն էլ մասնակցեցին Լոնդոնի խորհրդաժողովի աշխատանքներին 1920 թ. փետրւար եւ մարտ ամիսներին:

Հայաստանի սահմանների ինդրում բացայայտ կերպով յայտնի դարձաւ, որ պետութիւնները չեն կամենում ընդունել Հայկական դոյզ պատւիրակութիւնների 1919 թ. փետր. 12-ին ներկայացրած յուշագրի պայմանները. այդ պատճառով Պատւիրակութիւնները բաւականացան սոսկ բաղձանք յայտնելով, որ Հայաստանի մէջ մըտցըլին Վանի, Բիթլիսի, Կարնոյ վիլայէթների հայկական մասերը՝ ելքով դէպի ծով Տրապիզոնի վիլայէթում, իսկ Կիլիկիայից կազմւելինքնավար մի շրջան:

ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ — Խորհրդածողովին ներկայացրած դրուժիւնների մէջ, պատերազմութիւնները, շարունակելով պաշտպանել Հայաստանի հողատարութիւնը պետութիւններից մէկին յանձնելու պահանջը, ցոյց էին տալիս եւ հողատարութեան պայմաններն ու սեւողութեան շրջանը: Միաժամանակ քննում էին ելեւմտական բնոյթ կրող հարցերը, ինչպէս Օսմանեան պարտքի մի մասը Հայաստանին փոխանցելու միտքը:

Պետութիւններից եւ ոչ մէկը, սակայն, չհամաձայնեց ընդունել Հայաստանի հողատարութիւնը: Մնացեալ Նահանգների կառավարութիւնը, հակառակ կարգաւորած կրկնակի հետադատութեան, ղեւ մնում էր լուռ, եւ Գերագոյն Խորհուրդը անհրաժեշտ համարելով Հայաստանի վերաբերմամբ կիրառել Ազգ. Դաշնակցութեան Ուխտի 22-րդ կէտը, Լորդ Քըրքընի (1920) մարտ 12 Ենտղարով, առաջարկեց Ազգ. Դաշնակցութեան Խորհուրդին իր վրա առնել անկախ Հայաստանի պաշտպանութիւնը:

Քննելով այս առաջարկութիւնը, Ազգ. Դաշնակցութեան Խորհուրդը, 1920 թ. ապր. 11-ին Գերագոյն Խորհուրդին ուղղեց մի յուշագիր, որով հաստատում էր, թէ ինքը անկախ Հայկական Պետութեան ստեղծումը համարում է մարդկութեան պարտականութիւնը: Բայց եւ այնպէս, հնարաւոր չի գտնում հողատարութեան ստանձնումը, որովհետեւ Խորհուրդը պետութիւն չէ, նա իր տրամադրութեան տակ ոչ զորք ունի եւ ոչ նիւթական միջոցներ: Ուխտի 22-րդ կէտը չի նախատեսում որեւէ դէպք, երբ Խորհուրդը կարող է իր վրա առնել մի երկրի հողատարութիւնը. բնդհակառակը, Ուխտը Խորհուրդին հրահանգում է հսկել պետութիւնների վրա, որ սրանք գործադրեն հողատարութեան պայմանները Օսմանեան կայսրութեան նախկին մասերի վրա: Այս պատճառով Խորհուրդը գտնում է անհրաժեշտ, որ Ազգ. Դաշնակցութեան անդամ պետութիւններից մէկը ստանձնէ հողատարութիւնը՝ Ազգ. Դաշնակցութեան հակակշոր ներքոյ եւ բարոյական աջակցութեամբ: Ազգ. Դաշնակցութեան Խորհուրդը այդ առթիւ պատրաստակամութիւն էր յայտնում պաշտօնական բանակցութիւններ սկսելու պետութիւնների հետ, բայց նախ քան այդ կամենում էր գիտենալ, թէ արդեօք Գերագոյն Խորհուրդը համաձայն է Հայաստանի Հանրապետութեան տրամադրել պահանջած նիւթական միջոցները եւ կամ ժամանակաւոր դրամական երաշխաւորութիւններ: Քանի որ Հայաստանի հողերի մեծ մասը դրաււած էր Օսմանեան բանակի կողմից, Խորհուրդը կամենում էր իմանալ, թէ արդեօք դաշնակից պետութիւնները համաձայն են ի հարկին ապա-

հոյ՛կել Հայաստանին յատկացած Օսմանեան հողերի փախանցումը Հայաստանի Հանրապետութեան, եւ արդեօք Գերագոյն Խորհուրդը համաձայն է պաշտպանել Հայաստանի հողերը մինչեւ այն վայրկեանը, երբ այլեւս այլ միջոցներով կարելի կը լինի իրականացնել այդ ապահովութիւնը, եւ, վերջապէս, Թիւրքիայի հետ կնքելիք յառաջիկայ հաշտութեան դաշնագրով Հայաստանին ծովային ելք տրուելու է, թէ ոչ: Եթէ հոգատար պետութիւն չզտնէր, Ազգ. Դաշնակցութեան Խորհուրդը պատրաստակամութիւն էր յայտնում Գերագոյն Խորհրդի հետ միասին քննութեան առնել, թէ արդեօք ուրիշ իրական միջոցներ չկա՞ն Հայաստանի պաշտպանութեան համար:

Այս յուշադրին Ազգ. Դաշնակցութեան Խորհուրդը պատասխան չստացաւ Գերագոյն Խորհուրդից:

ՍԱՆՆՈՒՅՄՕԻ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԸ .— Ազգ. Դաշնակցութեան Խորհրդի այս դիմումը դուգադիպեց Սաննիէմօի խորհրդաժողովի աշխատանքների սկզբնաւորութեան: Սաննիէմօի խորհրդաժողովը հաւաքել էր միայն Թիւրքիայի հետ կնքելիք հաշտութեան դաշնագրի պայմանները մշակելու համար:

1920 թ. ապր. 25-ին, ղեռ Սաննիէմօի խորհրդաժողովի ընթացքին, Գերագոյն Խորհուրդը դիմեց նախագահ Վիլսոնին՝ առաջարկելով, որ Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգները ընդունեն Հայաստանի հոգատարութիւնը: Գերագոյն Խորհուրդը խնդրում էր նոյնպէս նախագահ Վիլսոնին ստանձնել իրաւարարի դերը Հայաստանի եւ Թիւրքիոյ միջեւ գծելիք սահմանների հարցում:

Միացեալ Նահանգների մերժումը հոգատարութիւնն ընդունելու յայտնի դարձաւ խորհրդաժողովի փակումից յետոյ, բայց Վիլսոնն ինքը համաձայնեց ընդունելու իրաւարարի պաշտօնը:

Սաննիէմօի խորհրդաժողովի ժամանակ հայկական երկու պատերազմութիւնները բանակցում էին Ազրբէջանի եւ Վրաստանի ներկայացուցիչների հետ: Բանակցութիւնների էական խնդիրը կապմում էր երեք հանրապետութիւնների ծովային ելքը: Ի նկատի ունենալով, որ Սաննիէմօի խորհրդաժողովը ղեռ վերջնականապէս որոշած չէր Հայաստանի ծովային ելքի հարցը, եւ որ, միւս կողմից, Հայաստանի ներքին գաւառներից դէպի Սեւ Մով երկաթուղի անցկացնելը Տրապիզոնի վիլայէթի վրայով կապւած էր մեծ գժւարութիւնների հետ, Հայաստանի ներկայացուցիչները պնդում էին, որ Հայաստանին իրաւունք տրւի սեփական երկաթուղի շինելու Կարսից դէպի Ճորոխի գետաբերանը Ճորոխ գետի ձախ ափով, այն պայմա-

նով, որ Վրաստանի հողով անցնող երկաթուղագծի շրջանը վայելէ էկտտերիտորիալ իրաւունքներ: Վրաստանի յամառ դիմադրութեան պատճառով, սակայն, որեւէ համաձայնութիւն կարելի չեղաւ կայացնել եւ Թիւրքիային առաջարկելիք հաշտութեան նախագծի մէջ նման կէտ չմտցւեց:

Հաշտութեան այս նախագիծը մշակւեց Սան-Ռէմօի խորհրդա-  
ժողովում եւ 1920 թ. մայիս 11-ին հանդիսաւորապէս յանձնւեց  
Թիւրքական պատերազմութեան: Հաշտութեան նախագծի յանձնման  
հանդիսին ներկայ էին եւ Հայաստանի ներկայացուցիչներ Պօղոս  
Նուպար փաշան եւ Ա. Ահարոնեանը, որոնք, իբրեւ դաշնադիր կող-  
մի պատերազմներ, նստած էին պետութիւնների ներկայացուցիչների  
չարքին:

Քանի որ չգտնուեց եւ ոչ մի պետութիւն, որ համաձայնէր ըս-  
տանձնել Հայաստանի հողատարութիւնը, Դաշնակից պետութիւններ-  
ը ստիպւած եղան ձեռք քաշել Ազգ. Դաշնակցութեան Ուխտի 22-րդ  
կէտի գործադրութիւնից Հայաստանի վերաբերմամբ: Միւս կողմից  
հաստատ վճռականութիւնը Հայաստանը ազատելու մասին, որ այն  
օրերին դեռ ուժեղ էր Դաշնակից պետութիւնների մէջ, յանգեց Հա-  
յաստանի իրաւական *de jure* ճանաչման:

Հաշտութեան դաշնագրի նախագծի յառաջարկում Հայաստա-  
նը նշանակւած է դաշնադիր պետութիւնների շարքում:

Դաշնագրի 89-րդ կէտը ասում է, թէ՛ «Թիւրքիան ճանաչում է  
Հայաստանը, ինչպէս վարելի են արդէն Դաշնակից պետութիւնները,  
իբրեւ ազատ եւ անկախ պետութիւն»:

Այսպիսով, 1920 թ. մայիս 11-ը պէտք է համարել Դաշնակից  
պետութիւնների կողմից Հայաստանի անկախութեան իրաւական ճա-  
նաչման օր:<sup>\*)</sup>

Հայաստանի սահմանները Թիւրքիայի հետ, հաշտութեան պայ-  
մանների նախագծում, որչաւ էին 89-91-րդ յօդուածներով: Հիւս.  
Ամեր. Միացեալ Նահանգների նախագահ Վիլսոնին էր յանձնւած  
վերջնական սահմանագծի ճշտումը Հայաստանի եւ Թիւրքիայի մի-  
ջեւ՝ պայմանով, որ Վանի, Բիթլիսի, Կարնոյ եւ Տրապիզոնի վի-

\*) Բրիտանական կայսրութիւն, Ֆրանսա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Յու-  
նաստան, Հէջաս, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումանիա, Սերբ-Խորվաթ-Սլովէն  
քաղաքութիւն, Չեխո-Սլովակիա - արմէ էին դաշնադիր կողմերը Թիւրքիայի  
եւտ: Հայաստանն էլ դրւած էր արանց կարգին:

լայնութիւնները ամբողջութեամբ կամ որոշ մասով միացւին Կովկասի Հայկական Հանրապետութեան, եւ լուծւի Հայաստանի ծովային ելքի հարցը:

Ինչ վերաբերում է Հայաստանի ու Ազրբէջանի եւ Հայաստանի ու Վրաստանի սահմաններին, դրանք (92-րդ յօդւած) պէտք է որոշւէին երեք հանրապետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ եւ միայն համաձայնութիւն կայացնել չկարողանալու դէպքում մեծ պետութիւնները իրենք պիտի որոշէին:

Հաշտութեան նախագծի մտահոգութեան առարկայ էր կազմում եւ հայկական փոքրամասնութեան պաշտպանութեան խնդիրը Թիւրքիայում: 141-րդ յօդւածով Թիւրքիան պարտաւորում էր, առանց ազգի, լեզւի, ցեղի կամ կրօնի խտրութեան, իր երկրի բոլոր բնակիչներին երաշխաւորել կեանքի եւ ազատութեան ապահովութիւն: Թիւրքիայի բոլոր բնակիչները իրաւունք պիտի ունենային ազատօրէն դաւանել իրենց կրօնը, հրապարակով կամ իրենց մասնաւոր կեանքում: Օսմանեան բոլոր հպատակները դառնում էին հաւասար օրէնքի առջեւ եւ պիտի վայելէին քաղաքական եւ քաղաքացիական միեւնոյն իրաւունքները՝ անկախ իրենց ցեղային, լեզւական կամ կրօնական պատկանելութիւնից (145-րդ յօդւած): Դաշնագիրը ապահովում էր փոքրամասնութիւնների իրաւունքը. ազգային փոքրամասնութեանց պատկանողներ հաւասար իրաւունքներ պիտի ունենային հանրային պաշտօններ կատարելու եւ արհեստով ու արդիւնարեքութեամբ զբաղւելու. լեզուների հաւասար իրաւունք, կատարեալ կրօնական ազատութիւն (150-րդ յօդ.) . անկախ բարեգործական, կրօնական եւ հանրային հիմնարկութիւններ հաստատելու իրաւունք (147-րդ յօդ.):

Բացի անձնական իրաւունքներից, դաշնագիրը որոշում էր եւ փոքրամասնութիւնների հաւաքական իրաւունքները: Այսպէս, երաշխաւորում էր որոշ մաս պետական, քաղաքային եւ այլ բիւզճէներից յօդուած փոքրամասնութիւնների (148-րդ յօդ.): Եկեղեցական ու դպրոցական ինքնավարութիւն եւ ազգային փոքրամասնութիւնների իրաւունք համեմատական մասնակցութեան Թիւրքիայի ներկայացուցչական մարմինների մէջ (145-րդ յօդ.):

Դաշնակից գլխաւոր պետութիւնները (Անգլիա, Ֆրանսա, Իտալիա եւ Ճապոնիա) իրենց իրաւունք էին վերապահում համախորհուրդ Ազգ. Դաշնակցութեան Խորհրդի հետ, որոշելու այն միջոցները, որոնք անհրաժեշտ կը նկատւէին դաշնագրում նախատեսւած պայմանները դործադրելու համար: Դաշնագրի գործադրութեան մի ե-

բաշխիք էր նկատուում (36-րդ յօդ.) Կ. Պոլսի անջատումը Թիւրքիայից, եթէ վերջինս չուզէր իրագործել դաշնագրի պայմանները :

Բացի այդ, դաշնագիրը պատիժներ էր տնօրինում այն անձանց համար, որոնք պատերազմի ընթացքին ոճիր էին գործել փոքրամասնութիւնների վերաբերմամբ (230-րդ յօդ.), որոշում էր ազատել բոլոր բռնի կալանաւորւածներին (142-րդ յօդ.), շեղեալ համարել բռնի իսլամացումները, վերագարձնել զանգւածային տեղահանութիւններից եւ ջարդերից ազատւածներին ստացւած քը (144-րդ յօդ.) :

Միայն մէկ կէտում Թիւրքիան բաւարարութիւն էր ստանում . նրան վերագարձուում էր Կիլիկիայի մէկ մասը, Ճիհուն գետից դէպի արեւմուտք, Ադանան ու Մերսինն էլ մէջը հաշուելով :

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՐԺՈՒՄԸ ՍՏԱՆՁՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ .— Չնայած, որ հաշտութեան Դաշնագրի նախագիծն 1920 թւի մայիս 11-ին յանձնուած էր Թիւրքիային, հոգատար պետութեան որոշումը շարունակեց : Եթէ մի պետութիւն գտնէր, որ համաձայնէր ստանալ Հայաստանի հոգատարութիւնը, Դաշնագիրը ստորագրելիս, անշուշտ, համապատասխան փոփոխութիւններ կը կատարէին ընազրում :

Նախագահ Վիլսոնը, Գերագոյն Սորճրդի առաջարկը Հայաստանի հոգատարութիւնը Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգներին յանձնելու մասին ստացաւ 1920 թ. ապր. 25-ին : Բայց նա դրանից առաջ արդէն, ապրիլ ամսին, Մերակոյտին ներկայացրել էր զօր. Հարբորդի տեղեկագիրը : Մերակոյտի արտաքին գործոց յանձնաժողովը, 1920 թ. մայիս 12-ին ընդունեց մի բանաձեւ, որը, հայ ժողովրդին իր համակրանքն արտայայտելուց յետոյ, սահմանափակուում էր միայն լիազօրելով նախագահին Թիւրքական ջրերն ուղարկել մի ռազմանաւ Հիւս. Ամեր. Միացեալ Նահանգների շահերը պաշտպանելու համար :

1920 թ. մայիս 24-ին նախագահ Վիլսոնը նորից դիմեց Մերակոյտին մի ուղերձով, որով խնդրում էր լիազօրել իրեն ընդունելու Հայաստանի հոգատարութիւնը : Իր առաջարկութիւնը Վիլսոնը հիմնաւորում էր Միացեալ Նահանգների նախաձեռնութեամբ ստեղծւած Ազգ. Դաշնակցութեան Ուխտի 22-րդ կէտով եւ խորունկ համակրանքով դէպի հայերը, այլեւ այն կարեկցութեամբ, որ բոլոր քրիստոնեայ երկրները արտայայտեցին հայկական տանջանքների հանդէպ :

1920 թ. մայիս 31-ին, Մերակոյտը 52 քէտով ընդդէմ 23-ի մեր-

ժեց ընդունել Հայաստանի հոգատարութիւնը: Որով, ուրեմն, մեծ պետութիւններից եւ ոչ մէկը, տարբեր պատճառներով, չկամեցաւ ստանձնել Հայաստանի հոգատարութիւնը, եւ հաշտութեան դաշնագրի նախագիծը Թիւրքիայի հետ մնաց անփոփոխ:

ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ. — Սպայի խորհրդաժողովը 1920 թ. յուլիսին, որ իր զբաղումի յատուկ առարկայ չղարձրեց հաշտութեան խնդիրը Թիւրքիայի հետ, հաստատեց Սան-Ռէմօի խորհրդաժողովի հանած որոշումը: Ահա Սան-Ռէմօի խորհրդաժողովի մշակած դաշնագրի այդ նախագիծն էր, որ ստորագրեց Սեւրում, 1920 թ. օգոստ. 10-ին, Դաշնակից պետութիւնների եւ Թիւրքիայի միջեւ. Դաշնակից պետութիւնների շարքին էր եւ Հայաստանի Հանրապետութիւնը, որի պատւիրակ Ա. Ահարոնեանը ստորագրեց Դաշնագիրը:

Սեւրի Դաշնագրի հետ միաժամանակ Հայաստանը ստորագրեց եւ մի առանձին դաշնագիր — *Traité Séparé* — Մեծն Բրիտանիայի, Ֆրանսայի, Իտալիայի եւ Ճապոնիայի հետ՝ Հայաստանում ապրող ուրիշ երկրների հպատակների եւ փոքրամասնութիւնների իրաւունքների մասին:

Սեւրի Դաշնագրով հայկական հարցը ստանում էր իր ամբողջական լուծումը: Հայաստանը դառնում էր միջազգային ընտանիքի մէկ անդամը, համարեա իր պատմական բովանդակ սահմաններում: Հայ ժողովուրդը վերածնւում էր քաղաքական եւ ազգային — մշակութային ազատ կեանքի համար: Նոր հեռանկարներ էին բացւում հաշտութեան առջեւ:

Փարիզ.

( վերջը յաջորդ անգամ )

